ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԱ

ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS
YEREVAN - 2016

«ԵԿԵՂԵՑԻ» ԵՎ «ԽՈՐԱՆ» ԲԱՌԵԶՐԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ

Կրսեն Հարությունյան, Հայկ Հակոբյան

Միջնադարյան Հայաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնական ու մշակութային ոլորտներին առնչվող զանազան տերմիններ են պահպանվել մեզ հասած վիմագրերում: Հատկապես նվիրատվական բովանդակության արձանագրությունները հարուստ նյութ են ընձեռում այդօրինակ հասկացությունների համեմատական քննության ու վերլուծության համար. այս տեսանկյունից էլ կարելի է բացատրել մեր համառոտ անդրադարձը վիմագրերում քանիցս հանդիպող «եկեղեցի» և «խորան» բառեզրերի նույնականության դրսևորման երևույթին[1]: Մինչ բուն շարադրանքին անցնելը՝ նկատենք, թե ինչ են իրենցից ներկայացնում քարեղեն այդ վկայագրերը:

Նվիրատվական արձանագրությունները, սովորաբար, բովանդակում են որևէ անձի կողմից (աշխարհիկ կամ հոգևորական) եկեղեցուն արված նվիրատվություն՝ (անշարժ կամ շարժական գույք), որի դիմաց այս կամ այն եկեղեցական տոնին նվիրառուից (եկեղեցու սպասավոր, միաբանու-

---

[1] Անիի եկեղեցիների թվաքանակի առեղծվածի (պայմանավորված՝ հազար ու մեկ եկեղեցիների գոյության վկայություններով) առնչությամբ «եկեղեցի» հասկացությանն անդրադարձել է պատմաբան, աղբյուրագետ Կ. Մաթևոսյանը: Քաղաքի եկեղեցիների որմերին պահպանված վիմագրերի վկայակոչմամբ նա փաստում է, որ «...պատարագի սեղաններ ունեցող խորաններն ինքնուրույն նշանակություն ունեին... և կարող էին ուղղակի «եկեղեցի» կոչվել», իսկ այն, որ մատենագիրների մոտ Անին քանիցս հազար ու մեկ եկեղեցիների քաղաք է հիշվում, վկայում է. «որ իր ծաղկման տարիներին Անին իրոք ունեցել է հազարից ավելի եկեղեցի ու մատուռ՝ պատարագի սեղանով խորան». դրանցում եկեղեցական մեծ տոներին մատուցվում էր Սուրբ պատարագ: Տե՛ս **Կ. Մաթևոսյան,** Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997, էջ 182, 188; այդ մասին տե՛ս նաև **Հ. Հակոբյան,** Պատարագների պատվիրման առանձնահատկությունները վիմագիր և մատենագիր աղբյուրներում, ատենախոսություն, Եր., 2014, էջ 25:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գայանե Սիմոնյան - ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ԵՎ ՆՐԱ ԾՆՆԴՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ 7

Նարինե Միրզոյան - ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ԳԻՐՔ ԴԱՏԱՍՏԱՆԻ» ԵՐԿԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 16

Տ.Հեթում քահանա Թարվերդյան - ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՃԵՐՈՒՄ Ե-Ը ԴԴ. 32

Էլյա Սարիբեկյան - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԼՈՒԾՄՈՒՆՔ ՅՈԲԱՅ» ԵՐԿՈՒՄ ԱՌԿԱ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 59

Արսեն Հարությունյան, Հայկ Հակոբյան - «ԵԿԵՂԵՑԻ» ԵՎ «ԽՈՐԱՆ» ԲԱՌԵԶՐԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ 87

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Մանուչարյան - ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ 99

Լիլիթ Սիմոնյան, Կարեն Հովհաննիսյան - ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՇՈՒՐՋ 113

Նելլի Ժամկոչյան - ԷՋՄԻԱԾՆԻ V ԴԱՐԻ ՄԻԱՆԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՇՈՒՐՋ 134

Արշակ Բալյան - ԲԱՂԴԱՍԱՐ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԸ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ... 146

Սարգիս Մելքոնյան - «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-ՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎՈՂ ԹԵՈԴՈՍՈՒՊՈԼԻՍ/ԿԱՐԻՆԻ ԺՈՂՈՎԻ ՀԱՐՑԸ 158

Հասմիկ Աբրահամյան - ՎԱՐԴԱՎԱՌՅԱՆ ՈՒԽՏԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ 177

ԿՐՈՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Սամվել Մկրտչյան - ՆՈՐ ՏԱՐԻ - ԱՄԱՆՈՐ (ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՇՐՋԱՆ) 209

Սամվել Մկրտչյան - ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴ (ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՇՐՋԱՆ) 216

Գոհար Սարգսյան - ՓԻԼՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ ԿՐՈՆԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐ -ՀԱՅԱՑՔԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 225

Հովհաննես Հովհաննիսյան - ՆԵՍՏՈՐԻ ՊՐՈՍՊՈՆԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎՆ ԻԲՐԵՎ ՆՐԱ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐ 235

Պարգև Բարսեղյան - ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ 245

Լիզա Քարիմյան - ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԽՈԼԱՍՏԻԿԱԿԱՆ ՄՏՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ: ԱՆՍԵԼՄ ՔԵՆՏԵՐԲԵՐԱՑՈՒ ՌԱՑԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 255

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Անուշավան եպս. Ժամկոչյան, Լիլիթ Սիմոնյան - ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՆԵԲՐՈՎԹԸ ԵՎ ՆԵՄՐՈՒԹ ԹԱԳԱՎՈՐԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ 273

Անուշավան Պետրոսյան - ՔՐԴԵՐԻ, ԵԶԴԻՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԱԶԳԱ-ԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՐԱՖՖՈՒ «ԿԱՅԾԵՐ ՎԵՊՈՒՄ» 303
Վոլոդյա Գասպարյան - ԽՈՐՀՐԴԱ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԵՐԱԶՄԻՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ 317

Հասմիկ Հարությունյան - ԿԻՆԸ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ 333

Վալերի Թունյան - ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ XVIII -XIX Դ. ՍԿԶԲՈՒՄ: ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 344
Գայանե Հակոբյան - ՀՀ ՆԵՐԳԱՂԹԱԾ ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ 360
Տեղեկություններ հեղինակների մասին 374
Ի գիտություն հեղինակների 383

СОДЕРЖАНИЕ

БОГОСЛОВИЕ

Гаяне Симонян - ПРАЗДНИК РОЖДЕСТВА ХРИСТА И ДАТА РОЖДЕНИЯ 7
Нарине Мирзоян - ПРИМЕНЕНИЕ «ГИРК ДАТАСТАНИ» («СУДЕБНИКА») МХИТАРА ГОША В АРМЯНСКИХ ОБЩИНАХ 16
Иерей Хетум Тарвердян - ПОЛОЖЕНИЕ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ХРИСТОЛОГИЧЕСКИХ СПОРАХ V-VIII ВВ. 32
Эля Сарибекян - БОГОСЛОВСКИЕ ВОПРОСЫ В "КОММЕНТАРИИ НА КНИГУ ИОВА" ГРИГОРА ТАТЕВАЦИ 59
А. Арутюнян, А. Акопян - ОДИНАКОВОЕ ЗНАЧЕНИЕ ПОНЯТИЙ “ЦЕРКОВЬ” И “РИЗНИЦА” В ЭПИГРАФИЧЕСКИХ НАДПИСЯХ 87

ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ

Ашот Манучарян - САГМОСАВАНК НА ПЕРЕКРЕСТКАХ ИСТОРИИ 99
Лилит Симонян, Карен Оганисян - К ВОПРОСУ О ПРАЗДНИЧНО-ОБРЯДОВЫХ ОБЫЧАЯХ СВЯТИЛИЩ ТУХ МАНУК 113
Нелли Жамкочян - ОБ ОДНОНЕФНОМ ЦЕРКВЕ В ЭЧМИАДЗИНЕ (V ВЕК) 134
Аршак Балян - МИТРОПОЛИТ БАГДАСАР И ЕПАРХИАЛЬНАЯ ШКОЛА В ШУШИ 146
Саргис Мелконян - ВОПРОС СОБОРА В ФЕОДОСИОПОЛЬ/КАРИНЕ УПАМИНАЮЩИЙСЯ В «АРМЯНСКОЙ КНИГЕ КАНОНОВ» 158

Асмик Абраамян - КЛАССИФИКАЦИЯ МЕСТ ПАЛОМНИЧЕСТВА ВАРДАВАРА 177

ИСТОРИЯ РЕЛИГИЙ

Самвел Мкртчян - НОВЫЙ ГОД - АМАНОР (ПЕРИОД БОЛЬШЕВИЗМА) 209
Самвел Мкртчян - РОЖДЕСТВО ХРИСТОВО (ПЕРИОД БОЛЬШЕВИЗМА) 216

թյուն) ստացել են ժամ կամ պատարագ[1]: Նման արձանագրությունները հիմնականում կրում են որոշակի պայման, որին հաջորդում են օրհնանք-մաղթանքի ու անեծքի բանաձևերը: Վերջիններս «…ուղղված են տվյալ նվիրատվության (անկախ նրա տեսակից) պահպանությանը»[2], որոնց միջոցով ապահովվում է դրա անձեռնմխելիությունն ու նվիրառուին ստիպում հանձն առած պարտավորության կատարմանը:

«Եկեղեցի» և «խորան» բառերը որոշ վիմագրերում ունեն հակադիր իմաստ: Բանն այն է, որ միջնադարյան Հայաստանում «…եկեղեցի ասելով հասկացել են ոչ միայն առանձին եկեղեցական կառույցները, այլև մեկ եկեղեցու ներսում գտնվող պատարագի սեղան ունեցող խորանը կամ խորանները»[3]: Առկա է նաև երևույթի հակառակ կողմը. խորանը ևս երբեմն «եկեղեցի» են կոչել[4]: Սա կարող էր պատճառ լինել այն բանի, որ նվիրատվությունների դիմաց ստացվող պատարագներն այդ շրջանում բավականին շատ են եղել. բացի այդ հայոց եկեղեցական օրենքով միևնույն օրը միևնույն սեղանի վրա միայն մի պատարագ կարելի էր մատուցել: Նման երևույթն իր կանոնական արտացոլումն է գտել. «Կանոնք Յովհաննու Մանդակունւոյ Հայոց կաթողիկոսի. գլուխք Է.» ՌՅԺԲ (ՌՅԵ) կանոնում, որտեղ կանոնը խախտողի համար պատիժ է սահմանվում. «Քահանայ որ ի միում աւուր Բ պատարագ մատուցանէ՝ ընդ խաչահանունսն եղիցի»[5]:

Թ. Թորամանյանը եկեղեցու մեջ պատարագի մի քանի խորանների առկայության երևույթը բացատրում է այսպես. «Հայ կղերին՝ հոգվո փրկության համար պատարագներ ծախելու սովորությունը այնքան չափազանցվեր է 11-12-րդ դարերում, որ հանձն առնված պատարագներու

---

[1] Հայաստանի նվիրատվական արձանագրություններին առանձին անդրադարձել է պ. գ. դ. Լ. Սարգսյանը, տե՛ս **Լ. Սարգսյան,** Հայաստանի նվիրատվական արձանագրությունները (9-14-րդ դդ.), Եր., 2007:

[2] Տե՛ս **Ս. Հարությունյան,** Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Եր., 1975, էջ 54:

[3] Տե՛ս **Կ. Մաթևոսյան,** Անի, էջ 180:

[4] Եկեղեցու ներսում առկա պատարագի սեղանը բնորոշելուց բացի խորանը ստուգաբանվում է նաև իբրև առանձին տաճար կամ եկեղեցի: Տե՛ս Հայերէն բացատրական բառարան, հ. երկրորդ, կազմեց՝ **Ստ. Մալխասեանց,** Եր., 1944, էջ 290:

[5] Կանոնագիրք Հայոց, հ. Բ., աշխատասիրությամբ **Վ. Հակոբյանի,** Եր., 1971, էջ 264, գլ. ԽԴ:

թիվը լիակատար իրագործելու համար բավական չէին տարվույն օրերը, ուստի ստիպված ամեն եկեղեցիներու մեջ ավելցուցեր են խորաններ՝ ավանդատուններու վրա. կրկնահարկ շիներ են ավանդատուններ հատկապես այդ նպատակով»[1]: Այստեղից կարելի է հետևություն անել, որ հիշյալ նպատակով են օգտագործվել եկեղեցիների փոքր խորանները, որոնք դարձյալ «եկեղեցի» են կոչվել զուտ այն բանի համար, որ ունեցել են պատարագի սեղաններ, այսինքն՝ խորան. դրանք հիմնականում ավանդատներում, զանգակատներում կամ մատուռներում էին: Ասվածն ընդհանրացնելու համար վկայակոչենք այդօրինակ վիմագրերից մի քանիսը.

Հովհաննավանքի Կաթողիկե եկեղեցու ձախ ավանդատան մուտքի վերնամասի 1216 թվակիր նվիրատվական վիմագրում Վահրամը և իր զուգակից Թաիկը եկեղեցու շինարարության համար նվիրաբերում են դրամական միջոցներ և այգի՝ փոխարենը ստանալով պատարագներ Ճրագալույցի, Զատկի ու Գալստյան տոներին: Վիմագիրն ավարտվում է օրհնանք-մաղթանքի, պայմանի ու անեծքի բանաձևով. «...ԿԱՏԱՐԻՉՔ ԳՐՈՅՍ ԱՒՐՀՆԻՆ Ի ՔԷ, ԵՒ ՈՐՔ ԽԱՓԱՆԵՆ **զԹ (9) ԵԿԵՂԵՑԻՍ՝** ԴԱՏԻՆ ՅԱՅ ԵՒ ՅԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ. ԱՄԷՆ»[2]:

Վիմագրում ուշագրավը «զԹ (9) եկեղեցիս» արտահայտությունն է. համանման է նաև նույն եկեղեցու հյուսիսարևմտյան ավանդատան նվիրագրի պատարագների հատկացման մասը. «...ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔ ՍՈՐԱ ՄԱՏՈՒՑԻՆ ԻՆՁ ԶԱՒՐ ՅԻՇԱՏԱԿԻ ՍՐԲՈՑ ՔԱՌԱՍՆԻՑՆ ՅԱՄԵՆԱՅՆ ԱՄԻ ՊԱՏԱՐԱԳԵԼ ԶՆՈՐ **ԶԻՆՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ** ՅԱՆՈՒՆ ԻՄ...»[3]: Մեծավաստակ հնագետ-վիմագրագետ Կ. Ղաֆադարյանը ծանոթագրում է, որ «զնոր զինն եկեղեցիքս պետք է հասկանալ մեծ եկեղեցու ինը խորանները»[4]: Այն, որ բերված օրինակներում խոսքը ոչ թե ինը եկեղեցական կառույցների, այլ եկեղեցու ինը խորանների մասին է, ապացուցվում է նաև նույն եկեղեցու արևմտյան պատի՝ Կոստանդին Ա Բարձրաբերդցի (1221-1267) կաթողիկոսի 1243 թվակիր արձանագրու-

---

[1] Տե՛ս **Թ. Թորամանյան,** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Եր., 1942, էջ 215:

[2] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Եր., 1948, էջ 84-85, արձ. 18:

[3] Նույն տեղում, էջ 87, արձ. 23:

[4] Նույն տեղում:

թյամբ՝ կրկին պատարագների հատկացման բաժնում. «...ԵՒ ՍԲ ԿԱ-ԹՈՂԻԿԷՆ **:Թ: (9) ԽՈՐԱՆԱՒ՝** ՅԱՄԵՆԱՅՆ ԱՄԻ ՊԱՏԱՐԱԳԵԼ Զ ՔՍ Ի ՏԱՒՆԻ Տ[ԵԱՌ]ՆԸՆԴԱՌԱՋԻՆ»[1]:

Հայր Ղ. Ալիշանը, անդրադառնալով հիշյալ արձանագրություններին, գրում է. «Յերկոսին ևս զուգաժամանակ արձանքս՝ արժանի է նկատողութեան յիշատակ Հին և Նոր, այլև Ինն եկեղեցեաց վանատեղւոյս. զոր արձան Կոստանդնի կաթողիկոսի Ինն խորան գրէ...»[2]: Թվում է, թե ինը եկեղեցի ասելով Հայր Ալիշանը նկատի է առել ինը եկեղեցական կառույց, ինչը Կոստանդին կաթողիկոսի վիմագրում փոխակերպվել է խորանի: Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք Հովհաննավանքն ունեցել է ինը խորան, ապա դրան սպառիչ պատասխան է տալիս նույն վանքի միաբան Զաքարիա Սարկավագը. «Երկու խորան աւագ խորանին յաջմէ և յահեկէ, զոր քարեայ աստիճանօք ելանեն: Երկու այլ ի ներքոյ նոցա, երկու յարևմտեան կողմն՝ յաջմէ և յահեկէ դրան: Երկու այլ ի վերայ նոցա, զոր քարեայ սանդխով ելանեն մետասան աստիճանօք»[3]: Պատմագիրը հիշատակում է եկեղեցու անկյունային չորս կրկնահարկ ավանդատները, որտեղ պատարագ է մատուցվել, այսինքն՝ բացի ավագ խորանից եկեղեցու ութ փոքր խորանները:

Ինչպես վերը նշվեց, նման փոքր խորաններ ունեցել են ոչ միայն եկեղեցիները, այլև զանգակատները, մատուռները, նույնիսկ տապանատները, որոնք վիմագրերում հաճախ «եկեղեցի» են կոչվել: Սանահնի վանքի քառահարկ զանգակատան շինարարական վիմագրում՝ փորագրված հարավային խորանի մուտքի վերնամասում, պահպանվել է «եկեղեցի» և «խորան» բառեզրերի նույնականության ևս մի վկայություն. «ԿԱՄԱՒՆ ԱՅ, ԵՍ՝ ՍԱԹՍ, ՈՐԴԻ ԱՐՏԱՒԱԶԱ, ԱՒՐՀՆԵՑԻ **ԶԷԿԵՂԵՑԻՔՍ ԶԱՆԿԱԿԱՏԱՆՍ**... ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ԶԱՄ[ԷՆ] ԷԿԵՂԵՑԻՍ ԻՆՁ ՊԱՏ[ԱՐԱԳԵԼ]»[4]:

Կ. Ղաֆադարյանը վիմագրի «զէկեղեցիքս զանկակատանս» արտահայտության առնչությամբ հաստատապես նշում է, թե «արձանագրու-

---

[1] Նույն տեղում, էջ 95, արձ. 36:

[2] **Ղևոնդ Ալիշան,** Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 168:

[3] «Զաքարեայ Սարկաւագի պատմագրութիւն», հ. երրորդ, Վաղարշապատ, 1870, էջ 13:

[4] Դիվան հայ վիմագրության (այսուհետ՝ ԴՀՎ), պրակ IX, Լոռու մարզ, կազմեցին՝ **Ս. Գ. Բարխուդարյան, Կ. Գ. Ղաֆադարյան, Ս. Տ. Սաղումյան,** Եր., 2012, էջ 73-74, արձ. 123:

թյուն կազմողն եկեղեցիքս ասելով հասկացել է զանգակատան միջի մատուռները և ոչ թե զանգակատնից անկախ ինչ-որ այլ եկեղեցի»[1], փոխարենը «Դիվան հայ վիմագրության» համապատասխան պրակում կասկածի տակ է առնվում, թե ստույգ ի՞նչ եկեղեցիների մասին է խոսքը[2]: Կարծում ենք՝ «զէկեղեցիքս զանկակատանս» ասելով իսկապես նկատի են առնվել զանգակատան խորանները, որտեղ պիտի պատարագ մատուցվեր եկեղեցական տոների ժամանակ: Նշենք, որ զանգակատներում պատարագ մատուցելու սովորույթը շարունակվել է նաև հետագա դարերում: 1654-1657 թթ. կառուցված Էջմիածնի Մայր տաճարի եռահարկ զանգակատան միջնահարկում ևս տեղադրվել է պատարագի սեղան՝ նվիրված Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքում հայտնված հրեշտակների երկնային բազմությանը. այստեղ յուրաքանչյուր տարվա «Սրբոց Հրեշտակապետացն՝ Գաբրիէլի, Միքայէլի եւ ամենայն երկնային զօրացն» տոնին մատուցվում է Սուրբ պատարագ:

Զանգակատունը քանիցս եկեղեցի է կոչվել նաև Հաղպատավանքի եռահարկ զանգակատան վիմագրերում: Հայկական ճարտարապետության գլուխգործոցներից մեկը համարվող այս շենքը «...բացի զանգակատան պատվանդանը հանդիսանալուց, վանքին ծառայել է իբրև բազմախորան եկեղեցի: Նրա երեք հարկերում կա պատարագի յոթը սեղաններ, որոնք ամփոփված են ներսում կառուցված մատրանման շենքերի և ավանդատների մեջ»[3]: Համաձայն արևմտյան մուտքի բարավորի շինարարական արձանագրության՝ կառույցը բնորոշվում է «...ԳԵՂԵՑԿԱԶԱՐԴ ՏԱՃԱՐՍ ԱՅ, ԶԱՐԹՈՒՑԱՆՈՂ ՓԱՌԱԲԱՆՉԱՑ ՏՆ ԵՒԹՆ ԽՈՐԱՆԱՒ...»[4]: Այսինքն՝ վիմագրում ևս շեշտված է շինության՝ յոթ խորան ունենալու հանգամանքը, մի բան, որը թույլ է տվել այն նաև «եկեղեցի» կոչել: «Դիվան»-ում ևս վիմագրի «եւթն խորանաւ» արտահայտությունը

---

[1] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Եր., 1957, էջ 146:

[2] ԴՀՎ, պրակ IX, էջ 74:

[3] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** Հաղբատ. ճարտարապետական կառուցվածքը և վիմական արձանագրությունները, Եր., 1963, էջ 62:

[4] ԴՀՎ, պրակ IX, էջ 209, արձ. 403: **Կ. Ղաֆադարյան,** Հաղբատ, էջ 222, արձ. 112:

բացատրվում է շինության խաչաձև ներքին կառուցվածքի թևերի առկայությամբ, որոնցից երեքը՝ առաջին, չորսը՝ երկրորդ հարկում են[1]:

Հաղպատավանքի զանգակատունը հաճախ եկեղեցի է կոչվել նաև կառուցմանը վերաբերող այլ արձանագրություններում. շարունակ կարելի է հանդիպել «...ԵՏՈՒ Լ. (30) ԴԱՀԵԿԱՆ Ի ՇԻՆՈՒԹԻ⌊ԻՆ⌋ ԵԿԵՂԵՑՈՅՍ...»[2], «...ԵՏՈՒ Լ. (30) ԴԱՀԵԿԱՆ ԵՒ ԳՈՄԻՇԱՆԻ Ի ՇԻՆՈՒԹԻ⌊ԻՆ⌋ ԵԿԵՂԵՑՈՅՍ...»[3], «...ԵՏՈՒ ԾԵ. (55) ԴԱՀԵԿԱՆ ԸՍՏ ՀՈՑԵՒԸՆԴՈՍ Ի ՇԻՆՈՒԹԻ⌊ԻՆ⌋ ԵԿԵՂԵՑՈՅՍ...»[4] և նմանատիպ այլ ձևակերպումների, որոնցում հիշատակված «եկեղեցի» տերմինն ակնհայտորեն գործածվել է «խորան»-ի իմաստով, այսինքն՝ խորաններ ունեցող կառույց, ուր տեղադրված է նաև պատարագի սեղան:

Ինչպես խորանն է վիմագրերում իբրև «եկեղեցի» բնորոշվել, այնպես էլ հակառակը՝ եկեղեցին պարզապես «խորան» է կոչվել: Այս առումով նշելի է Հաղպատ գյուղի Ս. Զորավար եկեղեցու մուտքի ճակատակալ քարի 1279 թվակիր շինարարական վիմագիրը, ուր կարդում ենք հետևյալը. «...ԵՍ՝ ԲԱՐՍԵՂ ՔԱՀԱՆԱ, ԿԱՆԳՆԵՑԻ ԶՍԲ ԶԱՒՐԱՎԱՐՔՍ ԵՒ ՇԻՆԵՑԻ ԶԽՈՐԱՆՍ ԼՈՒՍՈՅ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՑՍ...»[5]:

Կ. Ղաֆադարյանը, թերևս, «կանգնեցի» բառի կիրառական նշանակությունից ելնելով գտնում է, որ Ս. Զաւրավարք կոչվում է խաչքարը, որը մինչ օրս կանգուն է և որի անունից էլ այդ վայրը կոչում է Ս. Գևորգ Զորավար[6]: «Դիվան»-ում հիշյալ տեսակետը թեական է համարվում, քանի որ վիմագրում վկայված է «կանգնեցի զսուրբ զաւրավարքս», այսինքն՝ խոսքը «զաւրավարք» խաչքարերի մասին է, որոնք այժմ էլ տեղում են, իսկ մեզ առավել հուզող «շինեցի զխորանս լուսոյ» բառակապակցության

---

[1] ԴՀՎ, պրակ IX, էջ 210:

[2] ԴՀՎ, պրակ IX, էջ 212, արձ. 410: **Կ. Ղաֆադարյան,** Հաղբատ, էջ 225, արձ. 118: Ծանոթագրության մեջ Կ. Ղաֆադարյանը նշում է, որ «Եկեղեցի այստեղ զանգակատունն է անվանվել - այն պատճառով, որ նրա մեջ կան մի քանի մատուռանման շինություններ պատարագի սեղանով»:

[3] ԴՀՎ, պրակ IX, էջ 214, արձ. 414: **Կ. Ղաֆադարյան,** Հաղբատ, էջ 227, արձ. 122:

[4] ԴՀՎ, պրակ IX, էջ 216, արձ. 418: **Կ. Ղաֆադարյան,** Հաղբատ, էջ 228-229, արձ. 126:

[5] ԴՀՎ, պրակ IX, էջ 236, արձ. 478: **Կ. Ղաֆադարյան,** Հաղբատ, էջ 246, արձ. 167:

[6] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** նշվ. աշխ., էջ 246:

առնչությամբ նշվում է, որ այն «...պատշաճում է լուսեղեն, աստվածային խորանի՝ եկեղեցու կառուցմանը»[1]:

Վերը արդեն նշեցինք, որ վիմագրերում «եկեղեցի» կարող էր կոչվել նաև խորան ունեցող տապանատունը: Սրա վառ օրինակներից է նույն Հաղպատավանքի հյուսիսարևմտյան կողմում գտնվող Ուքանանց իշխանական տան եռախորան մատուռ-տապանատունը, որի յուրաքանչյուր խորանի վրա կանգնեցված է մեկական քանդակազարդ ու թիկունքն արձանագիր խաչքար (մեջտեղի խաչքարի միայն պատվանդանն է): Խաչքարերից հարավայինի թիկունքին, որը կրում է 1220 թ., կարդում ենք հետևյալը. «...ԵՍ՝ ՔՈՒՐԴՍ, ՈՐԴԻ ՍՄԲԱՏԱ, ԵՂԲԱՅՐ Տ[ԵԱՌ]Ն ԲԱՐՍՂԻ, ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ ԵՒ ԶՊԱՐԻՍՊՍ Ի ՎԵՐԱ ՀԱՆԳՍՏԱՐԱՆԻ ԻՄՈ...»[2]: Կ. Ղաֆադարյանը նկատում է, որ «այստեղ եկեղեցի է կոչվել տապանատունը, որի գլխին է կանգնեցրած արձանագրած խաչքարը»[3]: Դատելով վիմագրից՝ Քուրդը մահացել է նշված թվականին՝ չկարողանալով ավարտին հասցնել իր գերեզմանի կառուցումը: Նրա որդիներ Սմբատը և Ուքանը շարունակել են տապանատան շինարարությունը, որի վրա կանգնեցրել են հիշյալ խաչքարն ու արձանագրել. «...ԵՒ ՄԵՔ՝ ՍՄԲԱՏ ԵՒ ՈՒՔԱՆ, ՈՐԴԻՔ ՆՈՐԱ, ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ ԵՒ ԱՒՐՀՆԵՑԱՔ ԶԵԿԵՂԵՑԻՍ...»[4]: Փաստորեն, որդիների կողմից խաչքարի կանգնեցումը տապանատան վրա, որը վիմագրում երկիցս «եկեղեցի» է կոչվել, կառույցն օրհնելու միջոց է եղել. այստեղ ըստ ամենայնի՝ նաև պատարագ է մատուցվել ննջեցյալների հոգու փրկության համար:

Մեր դիտարկումները, սակայն, չեն վերաբերում միջնադարյան Հայաստանի կոթողային հուշարձաններին, մասնավորապես՝ խաչքարերին: Չնայած նրան, որ ինչպես հնագետ Հ. Պետրոսյանն է նշում. «Արևելքը մատնանշող եկեղեցական ավագ խորանին «փոխարինում է» խաչի խորանը»[5], այդուհանդերձ «...այս «փոխարինումը» պիտի հասկանալ միայն այն երկրպագել-աղոթելու առումով: Խաչքարային խորանը զուրկ էր ե-

---

[1] ԴՀՎ, պրակ IX, էջ 236:

[2] ԴՀՎ, պրակ IX, էջ 217, արձ. 421: **Կ. Ղաֆադարյան,** Հաղբատ, էջ 229-230, արձ. 128:

[3] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** նշվ. աշխ., էջ 230:

[4] Նույն տեղում:

[5] Տե՛ս **Հ. Լ. Պետրոսյան,** Խաչքար. ծագումը. գործառույթը. պատկերագրությունը. իմաստաբանությունը, Եր., 2008, էջ 333:

կեղեցական խորանի հիմնական գործառույթից. այն բեմ չէր, սեղան չուներ և, որպես կանոն, պատարագի համար չէր ծառայում»[1]:

Վիմական արձանագրություններում բազմաթիվ են քննվող բառեզրերի նույնականության վկայությունները, ըստ այդմ էլ սահմանափակվելով բերված բնորոշ օրինակներով ու հետևելով Կ. Մաթևոսյանին՝ արձանագրում ենք, որ պատարագ մատուցելու տեղը՝ խորանը, հիրավի ուներ ինքնուրույն նշանակություն, հաճախ առանձին անուն էր կրում և կարող էր պարզապես «եկեղեցի» կոչվել:

ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ ԻԲՐԵՎ «ԵԿԵՂԵՑԻ» ՀԻՇԱՏԱԿՎՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՑ

Նկ. 1 Սանահնի վանքի, Նկ. 2 Հաղպատավանքի Նկ. 3 Ուքանանց տապանատունը, զանգակատունը, ԺԳ. դ. զանգակատունը, 1245 թ. ԺԳ. դ.

«ԵԿԵՂԵՑԻ» ԵՎ «ԽՈՐԱՆ» ԲԱՌԵԶՐԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ

Արսեն Հարությունյան, Հայկ Հակոբյան

Բանալի բառեր *- վիմագրեր, եկեղեցի, խորան, պատարագ, եկեղեցական օրենք*

Վիմագրերում պահպանվել են «եկեղեցի» և «խորան» բառեզրերի նույնականության բազում վկայություններ: Միջնադարյան Հայաստանում «եկեղեցի» ասելով հասկացել են ոչ միայն առանձին եկեղեցական կառույցները, այլև մեկ եկեղեցու ներսում գտնվող պատարագի սեղան ունեցող խորանը: Առկա է նաև երևույթի հակառակ կողմը. խորանը ևս երբեմն «եկեղեցի» են կոչել: Սա կարող

[1] Նույն տեղում, էջ 383, ծանոթ. 38:

էր պատճառ լինել այն բանի, որ նվիրատվությունների դիմաց ստացվող պատարագներն այդ շրջանում բավականին շատ են եղել. բացի այդ հայոց եկեղեցական օրենքով միևնույն օրը միևնույն սեղանի վրա միայն մի պատարագ կարելի էր մատուցել: Հովհաննավանքից, Հաղպատավանքից ու Սանահնի վանքից մեզ հասած բնորոշ օրինակները հիմք ընդունելով՝ փորձել ենք հիմնավորել, որ պատարագ մատուցելու վայր՝ խորանը, ուներ ինքնուրույն նշանակություն, հաճախ կրում էր առանձին անուն և ուղղակի կարող էր կոչվել «եկեղեցի»:

ОДИНАКОВОЕ ЗНАЧЕНИЕ ПОНЯТИЙ “ЦЕРКОВЬ” И “РИЗНИЦА” В ЭПИГРАФИЧЕСКИХ НАДПИСЯХ

Арсен Арутюнян, Айк Акопян

Ключевые слова *– эпиграфические надписи, церковь, ризница, богослужение, канон церкви*

Эпиграфические надписи передают большое количество разнохарактерных терминов. Наше краткое сообщение связано с проявлением одинаковости значений двух из них – “церковь” и “ризница”. В Средневековой Армении понятием “церковь” обозначалось не только церковное строение, но и ризница или ризницы с алтарем, находящиеся внутри него. Известно также обратное явление, когда ризница также называется церковью. Наличие небольших ризниц в церквах, часто также в звонницах, склепах, часовнях, может быть объяснено обилием в данный период богослужений, получаемых взамен пожертвований, поскольку согласно канону Армянской церкви только одно богослужение могло быть отслужено перед одним и тем же алтарем в один и тот же день.

На основе характерных примеров, взятых из Ованнаванка, Ахпатаванка и монастыря Санаин делается попытка доказать, что место богослужения – ризница, имела самостоятельное значение, часто носила отдельное имя и могла называться просто церковью.

SIMILARITY OF NOTIONS OF “CHURCH” AND “TABERNACLE” AS PRESENTED IN EPIGRAPHY

Arsen Harutyunyan, Hayk Hakobyan

Keywords*: epigraphy, church, tabernacle, divine service, church law*

A lot of diverse terms are preserved to our days through Armenian epigraphy. This short report concerns two of them: “church” and “tabernacle”, which often

reveal as expressing the same meaning. In Medieval Armenia under the notion of the church not only a separate sacral building was meant but also a tabernacle or tabernacles with altar within it. There are facts witnessing the opposite: when the tabernacle was called "church". Availability of small tabernacles in churches, often also in bell-towers, crypts and chapels, may be explained with plenty of divine services got in return of gift offerings at that period, for according to the Armenian church law at the same day only one divine service could be served in front of the same altar.

An attempt is made based on characteristic examples taken from epigraphic inscriptions on Hovhannavank, Haghpatavank and Sanahin monastery to attest that the place of serving divine services – the tabernacle – had distinguished significance, often it had a different name and could be named simply "church".